ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.1

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/քննության հարցերի պատասխաններ/

ՀՈՒՆԻՍ 2021

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ~~

~~ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ~~

~~ԴԱՍԸՆԹԱՑ 2.1~~

~~ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ~~

~~/քննության հարցերի պատասխաններ/~~

~~Հունիս 2021թ.~~

ԲԱԺԻՆ Ա. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	գ
2	բ
3	բ
4	ա
5	դ
6	բ
7	գ
8	ա
9	դ
10	բ
11	գ
12	ա
13	դ
14	ա
15	գ
16	գ
17	ա
18	դ
19	ա
20	բ
21	գ
22	բ
23	դ
24	ա
25	գ

Ընդամենը 50 միավոր

ՀԱՐՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ՃԻՇՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

1. Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են.

գ/ հիմնադրամները և հասարակական միավորումները:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդված

Հոդված 50. Իրավաբանական անձի հասկացությունը

4. Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են հասարակական միավորումները, հիմնադրամները:

2. Իրավաբանական անձի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելիս չորրորդ հերթին մարվում է.

բ/ բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդված

Հոդված 70. Պարտատերերի պահանջները բավարարելը

1. Իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

չորրորդ հերթին մարվում է բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը:

3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը՝ օրենքով վերապահված հարցերը.

բ/ չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդված

Հոդված 99. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումը

3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը.

2) ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը.
3) ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը, նրա շահույթն ու վնասները բաշխելը.
4) ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը.
5) ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը:
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը կարող է վերապահվել նաև այլ հարցերի լուծում:
Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը՝ օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը:

4. Ընկերությունը, որի մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով կոչվում է.
ա/ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 105-րդ հոդված
Հոդված 105. Հիմնական դրույթներ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասին
1. Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Նման ընկերության մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով:

5. Կոոպերատիվի անդամի անձնական պարտքերի համար նրա փայի վրա բռնագանձում տարածել թույլատրվում է.
դ/ միայն այդ պարտքերը մարելու համար նրա այլ գույքի անբավարարության դեպքում:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 120-րդ հոդված
Հոդված 120. Կոոպերատիվի անդամության դադարումը և փայի անցումը

5. Կոոպերատիվի անդամի անձնական պարտքերի համար նրա փայի վրա բռնագանձում տարածել թույլատրվում է միայն այդ պարտքերը մարելու համար նրա այլ գույքի անբավարարության դեպքում: Կոոպերատիվի անդամի պարտքերով չի կարող բռնագանձում տարածվել կոոպերատիվի անբաժանելի ֆոնդերի վրա:

6. Եթե տարասեռ գույքի տարրերը կազմում են ընդհանուր նշանակությամբ իրենց օգտագործումը ենթադրող միասնական ամբողջություն, ապա դրանք դիտվում են որպես՝

բ/ բաղադրատարր գույք:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդված

Հոդված 137. Բաղադրատարր գույք

1. Եթե տարասեռ գույքի տարրերը կազմում են ընդհանուր նշանակությամբ իրենց օգտագործումը ենթադրող միասնական ամբողջություն, ապա դրանք դիտվում են որպես մեկ գույք (բաղադրատարր գույք):

7. Արժեթուղթը.

գ/ սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 146-րդ հոդված

Հոդված 146. Արժեթուղթ

1. Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:

8. Կողմերի համաձայնությամբ պայմանագրի հիման վրա անշարժ կամ շարժական գույքը, որը կարող է ծանրաբեռնվել այնպես, որ անձը, հօգուտ որի կատարվել է այդ ծանրաբեռնումը, իրավունք ունենա տիրապետելու և օգտագործելու գույքը և դրա օգտագործմամբ ստացվածը (պտուղներ, արտադրանք, եկամուտներ) նույն կերպ, ինչպես դա իրավասու կլիներ անելու գույքի սեփականատերը, կոչվում է.

ա/ ուզուֆրուկտ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 217.2-րդ հոդված

Հոդված 217.2. Ուզուֆրուկտը

1. Կողմերի համաձայնությամբ պայմանագրի հիման վրա անշարժ կամ շարժական գույքը կարող է ծանրաբեռնվել այնպես, որ անձը, հօգուտ որի կատարվել է այդ ծանրաբեռնումը, իրավունք ունենա տիրապետելու և օգտագործելու գույքը և դրա օգտագործմամբ ստացվածը (պտուղներ, արտադրանք, եկամուտներ) նույն կերպ, ինչպես դա իրավասու կլիներ անելու գույքի սեփականատերը (ուզուֆրուկտ):

9. Շինծու է համարվում այն գործարքը, որը.
դ/ կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված
Հոդված 306. Կեղծ և շինծու գործարքների անվավերությունը
2. Շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

10. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կնքած գործարքը.
բ/ առոչինչ է:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 309-րդ հոդված
Հոդված 309. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի կնքած գործարքի անվավերությունը
1. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կնքած գործարքն առոչինչ է:

11. Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը.
գ/ երեք տարի է:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդված
Հոդված 332. Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետ
Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

12. Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած.
ա/ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդված

Հոդված 372. Տուժանքի առավելագույն չափը և այն պակասեցնելը

1. Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

13. Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել.

դ/ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր քաղաքացիները:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 969-րդ հոդված

Հոդված 969. Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիրը

2. Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատեր քաղաքացիներ:

14. Սոցիալական գործընկերության կողմերն են.

ա/ աշխատողները և գործատուները՝ ի դեմս իրենց ներկայացուցիչների:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 40-րդ հոդված

Հոդված 40. Սոցիալական գործընկերության կողմերը

Սոցիալական գործընկերության կողմերն են աշխատողները և գործատուները՝ ի դեմս իրենց ներկայացուցիչների:

15. Գործադուլ հայտարարելու որոշման մեջ նշվում է.

գ/ գործադուլը ղեկավարող մարմինը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդված

Հոդված 74. Գործադուլ հայտարարելը

5. Գործադուլ հայտարարելու որոշման մեջ նշվում են՝

1) գործադուլ հայտարարելու համար հիմք համարվող պահանջները.

2) գործադուլն սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.

3) գործադուլը ղեկավարող մարմինը:

16. Գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ.

գ/ եթե աշխատողը դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդված

Հոդված 122. Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

17. Ստորև նշվածներից որ՞ը չի հանդիսանում նպատակային արձակուրդի տեսակ.

ա/ ամենամյա արձակուրդը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդված

Հոդված 171. Նպատակային արձակուրդի տեսակները

Նպատակային են համարվում՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդը.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը.

3) ուսումնական արձակուրդը.

4) պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդը.

5) չվճարվող արձակուրդը.

6) հայրության արձակուրդը:

18. Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա.

դ/ աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդված

Հոդված 186. Վճարումը պարապուրդի ժամանակ

1. Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

19. Իր լիազորությունների շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝ առաջացնում է.

ա/ նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:

Հիմք՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.6 հոդված

Հոդված 182.6 Հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի աշխատանքին խոչընդոտելը

1. Իր լիազորությունների շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային

հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:

20. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ լիցենզավորված անձը.

բ/ իրավաբանական կամ ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

լիցենզավորված անձ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա:

21. Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած քանի՞ տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը?

գ/ 5:

Հիմք՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված

Հոդված 7. Երաշխիքներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում

Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:

22. Նշվածներից ո՞ր պնդումն է ճիշտ.

բ/ օտարերկրյա ներդրումների առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

Հիմք՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված

Հոդված 8. Երաշխիքներ ազգայնացումից և բռնագրավումներից

Օտարերկրյա ներդրումները Հայաստանի Հանրապետությունում ազգայնացման ենթակա չեն:

Պետական մարմինները չեն կարող նաև բռնագրավել օտարերկրյա ներդրումները: Առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

23. Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա.

դ/ ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված

Հոդված 10. Հավաստիության կանխավարկածը

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

24. Նշվածներից ո՞ր պնդումն է սխալ՝

ա/ վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը շոշափում է պետության կամ համայնքի շահերը:

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդված

Հոդված 57. Վարչական ակտի հիմնավորումը

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.
բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.
գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

25. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա.

գ/ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

Հիմք՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված

Հոդված 3. Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները

2. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝
1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն):

ԲԱԺԻՆ Բ. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Խնդիր 1. /12 միավոր/

Պատասխան /Հարց 1 /6 միավոր/

Խնդրում նկարագրվածից ակնհայտ է, որ շինարարական կապալի պայմանագրով շինարարությունը նյութերով և սարքավորումներով ապահովելու պարտավորությունը կրում է «ԿԱՐՃ ԵՌԱԿՑՈՒՄ» ՍՊԸ-ն (Կապալառուն), քանի որ առկա չէ որևիցե նշում, համաձայն որի ամբողջ շինարարությունը կամ դրա որոշակի մասը պետք է ապահովի «ԴԵԲԵԴԻ ՎՏԱԿ ՓՈՔՐ ՀԷԿ» ՓԲԸ-ն (Պատվիրատուն): Հետևապես, Կապալառուն կրում է ամբողջական պատասխանատվություն իր կողմից աշխատանքների կատարման ընթացքում օգտագործված նյութերի և սարքավորումների որակի համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգիրք) 746-րդ հոդվածի 1-ին կետով՝ Պատվիրատուն իրավունք ունի հսկողություն իրականացնել կատարվող աշխատանքների ընթացքի և որակի, դրանց կատարման ժամկետների (ժամանակացույցի) պահպանման, Կապալառուի տրամադրած նյութերի որակի, Կապալառուի կողմից Պատվիրատուի նյութերի ճիշտ օգտագործման, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ՝ առանց միջամտելու Կապալառուի օպերատիվ տնտեսական գործունեությանը: Օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է, որ Կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և Պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով: Ակտն ստորագրելուց կողմերից մեկի հրաժարվելու դեպքում ակտում նշվում է այդ մասին, և ակտն ստորագրում է մյուս կողմը: Աշխատանքի արդյունքը հանձնելու կամ ընդունելու միակողմանի ակտը դատարանը կարող է անվավեր ճանաչել, եթե հիմնավոր են ճանաչվել ակտն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները: Նույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված է, որ օրենքով կամ շինարարական կապալի պայմանագրով նախատեսված դեպքերում կամ, եթե դա բխում է պայմանագրով կատարվող աշխատանքի բնույթից, աշխատանքի արդյունքի ընդունմանը պետք է նախորդի նախնական փորձարկում: Այդ դեպքում ընդունումը կարող է իրականացվել միայն նախնական փորձարկման դրական արդյունքի հիման վրա: Խնդրում բերված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ քննարկվող աշխատանքի ընդունումը պետք է ուղեկցվի փորձարկմամբ, որի նպատակով էլ հրավիրվել են համապատասխան իրավասություն ունեցող բոլոր անձինք: Ըստ էության, այդ անձինք, բացառությամբ Պատվիրատուի, փաստել են, որ օգտագործված որոշակի նյութերի, ինչպես նաև կոնստրուկցիաների մի փոքր մասի վատորակ լինելու պատճառով Կապալառուն, առանց Պատվիրատուի համաձայնության, թույլ է տվել նախագծային փաստաթղթերի և շինարարական նորմերի պահանջներից փոքր շեղումներ, սակայն դրանք չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա: Կապալառուն, նպատակ ունենալով ապացուցել,

որ թույլ տրված փոքր շեղումները չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա, իր միջոցներով և իր հաշվին հրավիրել է անկախ մասնագիտացված փորձագիտական խումբ, որն իր եզրակացությամբ ևս վերահաստատել է հսկողություն իրականացնող մարմինների դիրքորոշումը: Այդուհանդերձ Պատվիրատուն առարկել է ու չի ընդունել աշխատանքի արդյունքը և իր առարկությունները գրավոր ներկայացրել հանձնման-ընդունման (կատարողական) ակտի վրա, որը միակողմանի ստորագրվել է Կապալառուի կողմից՝ ներառելով նաև ստուգող մարմինների դրական եզրակացությունները: Դատարանը, ուսումնասիրելով գործում առկա տվյալները, գնահատելով բոլոր ապացույցները, իրականացնելով փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, հիմք ընդունելով Օրենսգրքի 752-րդ հոդվածի 2-րդ կետը (կապալառուն պատասխանատվություն չի կրում առանց Պատվիրատուի համաձայնության նախագծային փաստաթղթերի պահանջներից փոքր շեղումներ թույլ տալու համար, եթե ապացուցում է, որ դրանք չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա), կգա այն եզրահանգման, որ Պատվիրատուի հայցը՝ վատորակ նյութերի և կոնստրուկցիաների ամբողջ արժեքի և զոդման աշխատանքների արժեքի պահանջների մասով, անհրաժեշտ է մերժել, քանի որ գործում առկա չեն այնպիսի ծանրակշիռ փաստարկներ ու ապացույցներ, որով կհիմնավորվի Պատվիրատուի՝ շինարարական օբյեկտը նախանշված նպատակներով օգտագործելու անկարողությունը, որի պատասխանատվության կրողն էլ կհանդիսանար հենց Կապալառուն: Ավելին, առկա փաստաթղթերի վերլուծությամբ հիմնավորվում է Կապալառուի գործողությունների իրավաչափությունը: Ի լրումն դատարանը կանդրադառնա նաև հայցվորի (Պատվիրատուի) կողմից հայցապահանջում նշված իր կրած վնասների (բաց թողնված օգուտի) փոխհատուցման հարցին, որի մասով ևս կկայացնի մերժման վերաբերյալ դատական ակտ՝ իր եզրահանգումներում դնելով այն իրավական հիմնավորումները, ըստ որի Պատվիրատուն չի ներկայացրել տվյալ հայցապահանջի հիմքում ընկած փոխհատուցման գումարի որևէ հաշվարկ կամ եզրակացություն և բացի այդ, չի ապահովել Օրենսգրքի 409-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորումները (բաց թողնված օգուտը որոշելիս հաշվի են առնվում այն ստանալու համար պարտատիրոջ ձեռնարկած միջոցները և այդ նպատակով կատարված նախապատրաստությունները): Այն փաստը, որ Պատվիրատուն չի ստորագրել աշխատանքի արդյունքի հանձնման-ընդունման ակտը, որով տվյալ շինարարական օբյեկտը կարող էր լիարժեք շահագործվել, և տվյալ դեպքում Պատվիրատուն հնարավորություն կունենար գեներացնել իր եկամուտները, չի ենթադրում, որ Պատվիրատուն իրականում ունեցել է բաց թողնված օգուտ, կամ որ այն չափելի է, քանզի օբյեկտը Պատվիրատուի կողմից չշահագործելը եղել է բացառապես իր սեփական կամահայտնության դրսևորմամբ:

Պատասխան /Հարց 2 /6 միավոր/

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ԳԼՈՒԽ 37

ԿԱՊԱԼ

§ 3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՊԱԼ

Հոդված 738. Շինարարական կապալի պայմանագիր

1. Կապալառուն, շինարարական կապալի պայմանագրով, պարտավորվում է պայմանագրում սահմանված ժամկետում պատվիրատուի առաջադրանքով կառուցել որոշակի օբյեկտ կամ կատարել շինարարական այլ աշխատանքներ, իսկ պատվիրատուն պարտավորվում է կապալառուի համար ստեղծել աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ պայմաններ, ընդունել դրա արդյունքը և վճարել պայմանավորված գինը:

2. Շինարարական կապալի պայմանագիրը կնքվում է շենքի (ներառյալ՝ բնակելի տան), շինության կամ այլ օբյեկտի շինարարության, ինչպես նաև կառուցվող օբյեկտի հետ անխզելիորեն կապված մոնտաժման, գործարկման, կարգավորիչ և այլ աշխատանքներ կատարելու համար: Շինարարական կապալի պայմանագրի կանոնները կիրառվում են նաև շենքերի և շինությունների հիմնական վերանորոգման աշխատանքների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Պայմանագրով նախատեսված դեպքերում կապալառուն պարտավոր է պայմանագրում նշված ժամկետում ապահովել օբյեկտի շահագործումը՝ այն պատվիրատուի կողմից ընդունելուց հետո:

3. Այն դեպքերում, երբ աշխատանքները շինարարական կապալի պայմանագրով կատարվում են քաղաքացու (պատվիրատուի) կենցաղային կամ այլ անձնական պահանջմունքները բավարարելու համար, այդպիսի պայմանագրի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են կենցաղային կապալի պայմանագրով՝ պատվիրատուի իրավունքների մասին սույն գլխի 2-րդ պարագրաֆի կանոնները:

Հոդված 743. Շինարարությունը նյութերով և սարքավորումներով ապահովելը

1. Շինարարությունը նյութերով՝ ներառյալ կոնստրուկցիաներով կամ սարքավորումներով, ապահովելու պարտականությունը կրում է կապալառուն, եթե

շինարարական կապալի պայմանագրով նախատեսված չէ, որ ամբողջ շինարարությունը կամ դրա որոշակի մասն ապահովում է պատվիրատուն:

2. Կողմը, որի պարտականության մեջ է մտնում շինարարության ապահովումը, պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերը կամ սարքավորումները՝ առանց կատարվելիք աշխատանքի որակի վատթարացման, օգտագործելու անհնարինության համար, եթե չի ապացուցում, որ դրանք օգտագործելու անհնարինությունն առաջացել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար պատասխանատու է մյուս կողմը:

3. Առանց կատարվելիք աշխատանքի որակի վատթարացման՝ պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումներն օգտագործելու անհնարինության ու պատվիրատուի կողմից դրանց փոխարինումը մերժելու դեպքում կապալառուն իրավունք ունի հրաժարվել շինարարական կապալի պայմանագրից ու պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի գնի՝ կատարված աշխատանքին համարժեք մասը:

Հոդված 751. Աշխատանքները հանձնելը և ընդունելը

1. Շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը կամ կատարված աշխատանքի փուլը հանձնելու համար պատրաստ լինելու մասին կապալառուից հաղորդում ստացած պատվիրատուն պարտավոր է անհապաղ սկսել դրա ընդունումը, եթե այն նախատեսված է պայմանագրով:

2. Պատվիրատուն աշխատանքի արդյունքի ընդունումը կազմակերպում և իրականացնում է իր հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աշխատանքների արդյունքի ընդունմանը պետք է մասնակցեն պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:

3. Աշխատանքի առանձին փուլի արդյունքը նախապես ընդունած պատվիրատուն կրում է կապալառուի մեղքով չառաջացած՝ աշխատանքի արդյունքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

4. Կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով: Ակտն ստորագրելուց կողմերից մեկի հրաժարվելու դեպքում ակտում նշվում է այդ մասին, և ակտն ստորագրում է մյուս կողմը:

Աշխատանքի արդյունքը հանձնելու կամ ընդունելու միակողմանի ակտը դատարանը կարող է անվավեր ճանաչել, եթե հիմնավոր են ճանաչվել ակտն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները:

5. Օրենքով կամ շինարարական կապալի պայմանագրով նախատեսված դեպքերում կամ, եթե դա բխում է պայմանագրով կատարվող աշխատանքի բնույթից, աշխատանքի արդյունքի ընդունմանը պետք է նախորդի նախնական փորձարկում: Այդ դեպքում ընդունումը կարող է իրականացվել միայն նախնական փորձարկման դրական արդյունքի հիման վրա:

6. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել աշխատանքի արդյունքն ընդունելուց, եթե հայտնաբերվել են թերություններ, որոնք բացառում են դրա

օգտագործումը շինարարական կապալի պայմանագրով նախատեսված նպատակով, և կապալառուն կամ պատվիրատուն չեն կարող դրանք վերացնել:

Հոդված 752. Կապալառուի պատասխանատվությունն աշխատանքների որակի համար

1. Կապալառուն պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում նախագծային փաստաթղթերով և կողմերի համար պարտադիր շինարարական նորմերով ու կանոններով նախատեսված պահանջներից շեղումներ թույլ տալու, ինչպես նաև նախագծային փաստաթղթերում նշված շինարարական օբյեկտի ցուցանիշներին չհասնելու համար:

Շենքի կամ շինության վերակառուցման (նորոգման, վերականգնման) դեպքում կապալառուն պատասխանատվություն է կրում շենքի, շինության կամ դրա մասի ամրության, կայունության և ապահովության կորստի կամ նվազման համար:

2. Կապալառուն պատասխանատվություն չի կրում առանց պատվիրատուի համաձայնության նախագծային փաստաթղթերի պահանջներից փոքր շեղումներ թույլ տալու համար, եթե ապացուցում է, որ դրանք չեն ազդել շինարարական օբյեկտի որակի վրա:

Հոդված 753. Որակի երաշխիքը շինարարական կապալի պայմանագրով

1. Կապալառուն երաշխավորում է շինարարական օբյեկտի՝ նախագծային փաստաթղթերում նշված ցուցանիշներին հասնելը և երաշխիքային ժամկետում օբյեկտը շինարարական կապալի պայմանագրին համապատասխան շահագործելու հնարավորությունը, եթե այլ բան նախատեսված չէ շինարարական կապալի պայմանագրով: Օրենքով սահմանված երաշխիքային ժամկետի տևողությունը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

2. Կապալառուն պատասխանատվություն է կրում երաշխիքային ժամկետի սահմաններում հայտնաբերված թերությունների համար, եթե չի ապացուցում, որ դրանք առաջացել են օբյեկտի կամ դրա մասերի բնականոն մաշվածության, դրանց ոչ ճիշտ շահագործման, պատվիրատուի կամ նրա կողմից մասնակից դարձված երրորդ անձանց մշակած դրանց շահագործման մասին հրահանգների անճշտության, պատվիրատուի կամ նրա կողմից մասնակից դարձված երրորդ անձանց կողմից օբյեկտի անպատշաճ նորոգման հետևանքով:

3. Երաշխիքային ժամկետի ընթացքն ընդհատվում է այն ամբողջ ժամանակահատվածում, որի ընթացքում օբյեկտը հնարավոր չի եղել շահագործել այնպիսի թերությունների հետևանքով, որոնց համար պատասխանատու է կապալառուն:

4. Երաշխիքային ժամկետի ընթացքում սույն օրենսգրքի 752 հոդվածի 1-ին կետում նշված թերությունները հայտնաբերվելու դեպքում, պատվիրատուն պետք է ողջամիտ ժամկետում դրանց մասին հայտնի կապալառուին:

Խնդիր 2. /13 միավոր/

Պատասխան /Հարց 1 /9 միավոր/

Խնդրում նկարագրվածից ակնհայտ է, որ հարցը գլխավորապես պետք է դիտարկել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) շրջանակներում՝ մասնավորապես հիմնական շեշտադրումը դնելով շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման իրավակարգավորումների վրա, քանի որ «ՆՅՈՒ ԴԻԶԱՅՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի (Ընկերության) գործադիր տնօրեն Արշավիր Սիմոնյանը մտադիր է կնքել գործարք (տվյալ դեպքում՝ սարքավորումների գնման պայմանագիր) Ընկերության մասնակից Շահիս Պողոսյանի ամուսնու կողմից կառավարման մարմնում ներգրավվածություն ունեցող կազմակերպության՝ «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ԲԲԸ-ի (Մատակարար) հետ: Քննարկվող պարագայում գործարքը որակվում է շահագրգռվածության առկայությամբ, քանի որ Շահիս Պողոսյանին է պատկանում Ընկերության բաժնեմասերի 250/1000 մասը (այսինքն՝ քսան տոկոսից ավելին), իսկ ինքը և իր ամուսինը հանդիսանում են փոխկապակցված անձինք: Սա հիմնավորվում է Օրենքի 47-րդ հոդվածով, որը հանգամանալից անդրադառնում է ընկերությունների կողմից շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման առանձնահատկություններին: Նշված հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ գործարքները, որոնց կատարման մեջ առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության: Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության «գ» կետով նախատեսվում է, որ նշված անձինք ընկերության կողմից ճանաչվում են գործարք կնքելու մեջ շահագրգռված այն դեպքերում, եթե նրանք կամ նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը (այսուհետ՝ փոխկապակցված անձինք) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում: Նշված նորմերի ընդհանուր համադրումից ակնհայտ է դառնում, որ տվյալ գործարքի կնքման թույլտվություն գործադիր մարմինը (տվյալ դեպքում՝ գործադիր տնօրենը) կարող է և պետք է ստանա բացառապես Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Օրենքի 47-րդ հոդվածի 2-ր կետի համաձայն՝ ընկերության կողմից գործարքի կատարման մասին որոշումը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից ընկերության գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ: Գործադիր տնօրենի կողմից հրավիրված Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի ժամանակ հարցի քննարկման նպատակով կազմակերպված

Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian

քվեարկությանն Ընկերության մասնակից Շահիս Պողոսյանը չէր կարող մասնակցել, քանի որ վերջինս ուներ տվյալ գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն: Այս փաստը չի արձանագրվել որոշման կայացման ժամանակ, իսկ նա և Ընկերության մյուս՝ բաժնեմասերի 300/1000 մասի սեփականատեր Սարգիս Գնունին կողմ են քվեարկել որոշմանը՝ ապահովելով այսպես ասած ձայների մեծամասնությունը (բաժնեմասերի 550/1000 մասը), մինչդեռ վերը հիշատակված իրավանորմից բխում է, որ որոշման կայացմանը պետք է մասնակցեին բացառապես Ընկերության մյուս 2 մասնակիցները՝ Բորիս Ամատունին և Սարգիս Գնունին, իսկ Շահիս Պողոսյանի ձայնը որևէ կերպ չեր չէր կարող մասնակցել քվեարկության արդյունքներով տրված ձայների հաշվարկմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ Բորիս Ամատունին, որը հանդիսանում է Ընկերության բաժնեմասերի 450/1000 մասի սեփականատեր, դեմ է քվեարկել որոշմանը՝ ներկայացնելով իր հիմնավորումները, որոշումը չէր կարող համարվել ընդունված, քանի որ գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնության պահանջն ապահովված չէր (քվեարկությանը Բորիս Ամատունու և Սարգիս Գնունու միաժամանակյա մասնակցության դեպքում՝ վճռորոշ ձայնի իրավունքը պատկանում է Բորիս Ամատունուն, քանի որ նա ունի քվեարկության իրավունք տվող ավելի շատ ձայն): Եվ ըստ էության, Բորիս Ամատունին, հանդիսանալով Ընկերության մասնակից, օգտվելով իր իրավունքների պաշտպանության նպատակով Օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետով ընձեռված հնարավորությունից, արդարացիորեն դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել նշված գործարքը, քանի որ իր հիմնավորումներում նշել էր, որ գործարքի գինը գերազանցում է շուկայական գինը:

Դատարանը, վերլուծելով հայցի հիմքում դրված փաստերի արժանահավատությունը, ուսումնասիրելով գործարքի կնքմանը նախորդած բանակցությունների վերաբերյալ հայցվորի (Ընկերության մասնակից Բորիս Ամատունու) և պատասխանողների (Ընկերության մասնակիցներ Շահիս Պողոսյանի և Սարգիս Գնունու, Ընկերության՝ ի դեմս տնօրեն Արշավիր Սիմոնյանի) ներկայացրած հիմնավորումները, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը (ժողովի արձանագրություն, սարքավորման գնման պայմանագիր, կանխավճարի կատարումը հիմնավորող բանկային անդորրագիր), նկատի ունենալով այն հանգամանքը, որ կնքված գործարքի անվավերության վերաբերյալ հայցվորի ներկայացրած փաստարկներն ուղղակիորեն բխում են գործող օրենսդրության պահանջներից, հիմքում ունենալով Օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ կետի իրավակարգավորումները, որը սահմանում է հետևյալը. գործարքը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, որը կատարվել է նույն՝ 47-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ընկերության կամ նրա մասնակցի հայցով: Հետևապես, այս մասով դատարանն անվերապահորեն կբավարարի հայցը՝ գործարքը ճանաչելով անվավեր և կպարտավորեցնի Մատակարարին՝ վերադարձնել Ընկերությանը գործարքով ամբողջ ստացածը:

Formatted: Armenian

Formatted: Armenian

Ինչ վերաբերում է հայցապահանջի մյուս մասին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգիրք) 411-րդ հոդվածով սահմանված չափով տոկոսների վճարումը Մատակարարին պարտավորեցնելուն, ապա այս մասով դատարանը հայցը չի բավարարի՝ հետևյալ հիմնավորմամբ.

- Օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Այս դրույթի կարևոր շեշտադրումը կայանում է նրանում, որ դրամական միջոցները պետք է պահված լինեն ապօրինի կերպով, ստացողը պետք է խուսափի վերադարձնել դրանք, կամ օգտագործի այլ կետանցով, կամ դրանք ստացած լինի անհիմն կերպով և խնայի, որպեսզի հիշատակված այս իրավանորմով սահմանված տոկոսների հաշվարկը կատարվի և ներկայացվի համապատասխան վճարման պահանջ: Մինչդեռ խնդրում նկարագրված իրավիճակից ակնհայտ է, որ Մատակարարը, գործարքը կնքելիս, չգիտեր և չէր կարող իմանալ (այլ կերպ ասած՝ ունի բարեխիղճ վաճառողի կարգավիճակ) գործարքի կնքման իրավաչափության հավաստիության վերաբերյալ, քանզի Մատակարարի գործադիր մարմնի ղեկավարին, որը հանդիսանում է պայմանագիրը ստորագրող կողմ, կարող էր հասանելի չլինել այն տեղեկատվությունը, որ Ընկերության կողմից գործարքը կնքվում է շահագրգռվածության առկայությամբ, և անհրաժեշտ է ունենալ համապատասխան իրավասու մարմնի (տվյալ դեպքում՝ մասնակիցների ընդհանուր ժողովի) որոշում:

Պատասխան /Հարց 2 /4 միավոր/

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հոդված 47. Շահագրգռվածությունն ընկերության գործարքը կնքելիս

1. Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության:

Նշված անձինք ընկերության կողմից ճանաչվում են գործարք կնքելու մեջ շահագրգռված այն դեպքերում, եթե նրանք կամ նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը (այսուհետ՝ փոխկապակցված անձինք)՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ ընկերության հետ իրենց հարաբերություններում հանդես են գալիս երրորդ անձանց շահերից.

բ) տիրապետում են (յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ համակցության մեջ) գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի բաժնեմասերի (փայի, բաժնետոմսի) քսան և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում.

դ) ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Ընկերության կողմից գործարքի կատարման մասին որոշումը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից ընկերության գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ:

3. Գործարքի կատարումը, որի կատարման դեպքում առկա է շահագրգռվածությունը, չի պահանջում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ընդհանուր ժողովի որոշումն այն դեպքում, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին՝ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացման օրը):

4. Գործարքը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, որը կատարվել է սույն հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ընկերության կամ նրա մասնակցի հայցով:

5. Սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:

Խնդիր 3. /15 միավոր/

Պատասխան /Հարց 1 /8 միավոր/

Խնդրի ընդհանուր բովանդակությունից պարզ է դառնում, որ Ընկերության կամքից անկախ պատճառներով (շուկայական պայմանների կտրուկ փոփոխությամբ պայմանավորված) գործունեության ծավալներն էական նվազել են, և Ընկերությունը հարկադրված է վերանայել իր ծախսային քաղաքականությունը և հաստիքացուցակը՝ անհրաժեշտ թվաքանակով աշխատակիցների կրճատման նպատակով: Այս նպատակով Ընկերության գործադիր մարմնի կողմից պահանջով հրավիրված Ընկերության խորհրդի նիստ հրավիրելն իրավաչափ է եղել, քանզի դրանում ներառված օրակարգային հարցերի քննարկման նպատակով պահանջվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «իգ» և «իդ» ենթակետերով ամրագրված խորհրդի որոշում, քանի որ նշված դրույթներով ամրագրված է, որ խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝ ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի, ինչպես նաև հաստիքացուցակի հաստատումը: Ընկերության խորհրդի որոշումը ևս օրինաչափ է՝ թե՛ տնտեսական, թե՛ իրավական տեսանկյունից: Իրավական տեսանկյունից օրինաչափությունը հիմնավորվում է նրանով, որ ըստ էության խորհուրդն իր որոշումն ընդունելուց ակամայից հաշվի է առել ՀՀ աշխատանքային օրենսգրքով (Օրենսգիրք) վերաբերելի իրավիճակներին ներկայացվող հիմնական պահանջները (մասնավորապես՝ Ընկերության գործադիր մարմնի համար հնարավորություն ստեղծելով օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցել անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի շրջանակներում ներգրավված անձանց և իրավասու պետական մարմնին): Ընկերության գործադիր տնօրենը, սակայն հաշվենկատ չի գտնվել և հիմք ընդունելով այն փաստը, որ խորհրդի որոշման մեջ նշված է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը պետք է ազատել աշխատակիցներին, իր հրամաններով ազատել է վերջիններիս 2021 թվականի հուլիսի 20-ին, որով չի ապահովել Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատակիցներին ազատելու հիմքով Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված՝ լուծման ամսաթվից ոչ ուշ, քան երկու ամիս առաջ ծանուցելու պահանջը: Հարկ է նշել, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի (սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:) հիմնավորումների նշանակալի փաստաթղթավորում չի պահանջվի, քանի որ Ընկերության գործունեության ծավալների նվազումն ուղղակիորեն հանգեցրել է բոլոր տեսակի արտադրական աշխատատեղերի կրճատմանը: Բացի այդ, Ընկերության կողմից ազատված աշխատակիցների հետ վերջնահաշվարկ կատարելիս, Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասով

(Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն աշխատողին վճարում է արձակման նպաստ նրա մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով) սահմանված կարգով և չափով չի հաշվարկվել և նրանց չի վճարվել արձակման նպաստ: Քանի որ Ընկերությունը խախտել է Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված ծանուցման ժամկետները, ուստի Ընկերությունը պարտավոր էր նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և չափերով հաշվարկել և վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար (տվյալ դեպքում ամբողջ երկամսյա ժամանակահատվածի համար, քանի որ ազատման հրամաններով աշխատակիցներն ազատվել են հենց նույն օրվանից), որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

Դատարանը, ուսումնասիրելով հայցադիմումի հիմքում դրված փաստերն ու ապացույցները, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրման արդյունքում կգա հետևյալ եզրահանգման.

- Հայցը՝ յուրաքանչյուր աշխատակցի հաշվով արձակման նպաստի մասով՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով և ծանուցման ժամկետը խախտելու ողջ երկամսյա ժամանակահատվածի համար առաջացած տուժանքի մասով՝ հաշվարկի կատարումը հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափով, կբավարարի՝ պարտավորեցնելով Ընկերությանը վճարել սույն կետում նշված կարգով հաշվարկված ամբողջ գումարը:
- Հայցը՝ արձակման նպաստի չվճարման ամբողջ (խնդրում նկարագրված դեպքում՝ եռամսյա) ժամանակահատվածի համար տոկոսների մասով, կմերժի, քանի որ Օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասն անդրադառնում է միայն այն դեպքերին, երբ՝ եթե գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է Օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը: Դատարանն իր հիմնավորման մեջ անպայման կանդրադառնա այն փաստական հանգամանքին, որ արձակման նպաստը և ծանուցման ժամկետը խախտելու հետևանքով առաջացած տուժանքը ՀՀ օրենսդրությամբ չեն համարվում աշխատավարձ, իսկ սույն կետում վկայակոչված իրավանորմով տոկոսների վճարման պարտականություն նախատեսվում է միայն աշխատավարձի՝ սահմանված ժամկետից ուշ վճարման դեպքերին:

Ի լրումն վերոնշյալի՝ Ընկերության կողմից միանգամից թվով 24 աշխատակիցներին (որոնք գերազանցում են ընդհանուր աշխատակիցների՝ 45-ի, տասը տոկոսը) աշխատանքից ազատելու երևույթն Օրենսգրքի տեսանկյունից համարվում է զանգվածային ազատման դեպք, որն Ընկերության համար սահմանում է լրացուցիչ պարտականություններ Օրենսգրքով սահմանված կարգով (Օրենսգրքի 116-րդ հոդված):

Պատասխան /Հարց 2 /3 միավոր/

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքերը նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով: Այսպես.

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսունհինգ

տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Պատասխան /Հարց 3 /2 միավոր/

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով զանգվածային ազատումների դեպքում գործատուի պարտականությունը նախատեսված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 116-րդ հոդվածով: Այսպես.

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 116. Զանգվածային ազատումները

1. Կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ մինչև աշխատանքային պայմանագրերը լուծելը, ազատվող աշխատողների թվաքանակի մասին տվյալները (ըստ մասնագիտությունների և սեռատարիքային կազմի) ներկայացնել զբաղվածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին և աշխատողների ներկայացուցչին, եթե նախատեսվում է երկու ամսվա ընթացքում աշխատանքից ազատել աշխատողների ընդհանուր թվի ավելի քան տասը տոկոսը, սակայն 10 աշխատողից ոչ պակաս (զանգվածային ազատումներ):

2. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով և սեզոնային աշխատանքային պայմանագրով աշխատողների ազատման դեպքերը, եթե դրանք կատարվել են առանց պայմանագրերում նշված ժամկետների խախտման, աշխատողների զանգվածային ազատումներ չեն համարվում:

Պատասխան /Հարց 4 /2 միավոր/

Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում առաջացող պատասխանատվությունը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածով: Այսպես.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 41. Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը

Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը (բացառությամբ սույն օրենսգրքի 41^1, 41^2, 96^1 հոդվածներով, 158 հոդվածի տասնյոթերորդ մասով, 169^5, 169^8 հոդվածներով նախատեսված դեպքերի)՝

առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված անձի նկատմամբ:

Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում գործատուի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափով:

Խնդիր 4. /10 միավոր/

Պատասխան /Հարց 1 /4 միավոր/

Խնդրում տրված տվյալներից պարզ է դառնում, որ պայմանագիրը կնքված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգիրք) 635-րդ հոդվածի ընդհանուր տրամաբանության և դրա բովանդակությունն ընդգրկող վերաբերելի դրույթների կարգավորման համատեքստում: Ըստ այդմ, «ՀՈՒՍԱԼԻ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄ» ՍՊԸ-ն (Վարձատու) վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնել է անհատ ձեռնարկատեր Ելենա Տեր-Առաքելյանցի (Վարձակալ) ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը ու իր ուժերով ծառայություններ է մատուցում դրա կառավարման և տեխնիկական շահագործման համար: Այստեղից բխում է, որ տրանսպորտային միջոցի կառավարմամբ և տեխնիկական շահագործմամբ Վարձատուն ծառայություններ է մատուցում Վարձակալին: Օրենսգրքի 643-րդ հոդվածը հստակ անդրադառնում է տրանսպորտային միջոցով պատճառված վնասի համար պատասխանատվությանը, ըստ որի՝ վարձակալված տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով և սարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, Օրենսգրքի 60 գլխով նախատեսված կանոններին համապատասխան, պատասխանատվություն է կրում վարձատուն: Նա իրավունք ունի երրորդ անձանց վճարած գումարը հատուցելու մասին վարձակալին հետադարձ պահանջ ներկայացնել, եթե ապացուցում է, որ վնասը ծագել է վարձակալի մեղքով: Խնդրում նկարագրված իրավիճակից պարզ է դառնում, որ Վարձատուն, պայմանագրով նախատեսված կարգով, հերթական անգամ Վարձակալի ապրանքների տեղափոխման ժամանակ վթարի է ենթարկվել՝ երրորդ անձին պատճառելով նյութական վնաս, որի առաջացման հետ կապված Վարձակալը փաստացի որևէ մեղք չունի: Օրենսգրքի 1072 հոդվածի 1-ին կետի համաձայն (Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:)՝ քննարկվող դեպքում երրորդ անձին հասցված վնասի ուղղակի պատասխանատուն հենց Վարձատուն է՝ առանց Վարձակալի նկատմամբ հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքի, ինչպես նախատեսված է Օրենսգրքի 1074 հոդվածով:

Դատարանը, ուսումնասիրելով առկա փաստերը, իրականացնելով վերը ներկայացված իրավանորմերի ընդհանուր համադրում, կգա այն եզրահանգման, որ «ՀՈՒՍԱԼԻ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄ» ՍՊԸ-ի պնդումներն անհիմն են, և Վարձատուի հայցը կմերժի:

Պատասխան /Հարց 2 /6 միավոր/

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ԳԼՈՒԽ 35

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

§ 3. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ

Հոդված 635. Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր

1. Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով (ժամկետով ֆրախտ) վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը ու իր ուժերով ծառայություններ է մատուցում դրա կառավարման և տեխնիկական շահագործման համար:

2. Անձնակազմով տրանսպորտի միջոցի վարձակալության պայմանագրի նկատմամբ չեն կիրառվում վարձակալության պայմանագիրն անորոշ ժամկետով վերսկսելու մասին կանոնները:

Հոդված 637. Տրանսպորտային միջոցը պահպանելու վարձատուի պարտականությունը

Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում **վարձատուն** պարտավոր է ապահովել վարձակալության հանձնված տրանսպորտային միջոցի պատշաճ վիճակը: Այդ պարտականությունը ներառում է տրանսպորտային միջոցի ընթացիկ և հիմնական վերանորոգումն ու անհրաժեշտ պատկանելիքներ տրամադրելը:

Հոդված 638. Վարձատուի պարտականությունները՝ տրանսպորտային միջոցի կառավարման և տեխնիկական շահագործման ոլորտում

1. Վարձակալին մատուցվող՝ տրանսպորտային միջոցի կառավարման և տեխնիկական շահագործման վարձատուի ծառայությունները պետք է ապահովեն դրա

բնականոն և անվտանգ շահագործումը պայմանագրում նշված վարձակալության նպատակներին համապատասխան: Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել վարձակալին մատուցվող ծառայությունների ավելի լայն շրջանակ:

2. Տրանսպորտային միջոցի անձնակազմը և նրա որակավորումը պետք է համապատասխանեն կողմերի համար պարտադիր կանոնների պահանջներին ու պայմանագրի պայմաններին, իսկ եթե կողմերի համար պարտադիր կանոններով այդպիսի պահանջներ չեն սահմանվել, ապա՝ տվյալ տեսակի տրանսպորտային միջոցի շահագործման սովորական պահանջներին ու պայմանագրի պայմաններին:

3. Անձնակազմի անդամները համարվում են վարձատուի աշխատողներ: Նրանք ենթարկվում են կառավարմանը և տեխնիկական շահագործմանը վերաբերող՝ վարձատուի կարգադրություններին ու տրանսպորտային միջոցի առևտրային շահագործմանը վերաբերող՝ վարձակալի կարգադրություններին:

4. Անձնակազմի անդամների ծառայությունները վճարում է վարձատուն, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

Հոդված 639. Տրանսպորտային միջոցի առևտրային շահագործման հետ կապված ծախսերը վճարելու վարձակալի պարտականությունը

Վարձակալը վճարում է տրանսպորտային միջոցի առևտրային շահագործման կապակցությամբ առաջացած ծախսերը՝ ներառյալ վառելիքի ու շահագործման ընթացքում օգտագործվող մյուս նյութերի ծախսերը, ինչպես նաև տուրքերը, եթե այլ բան նախատեսված չէ անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով:

Հոդված 643. Պատասխանատվությունը տրանսպորտային միջոցով պատճառված վնասի համար

Վարձակալված տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով և սարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, սույն օրենսգրքի 60 գլխով նախատեսված կանոններին համապատասխան, պատասխանատվություն է կրում **վարձատուն**: Նա իրավունք ունի երրորդ անձանց վճարած գումարը հատուցելու մասին վարձակալին հետադարձ պահանջ ներկայացնել, եթե ապացուցում է, որ վնասը ծագել է վարձակալի մեղքով:

2. ԱՌԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 645. Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր

1. Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է

վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ առանց նրան կառավարման ու տեխնիկական շահագործման համար ծառայություններ մատուցելու:

2. Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի նկատմամբ չեն կիրառվում անորոշ ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը վերսկսելու մասին կանոնները:

Հոդված 647. Վարձակալի՝ տրանսպորտային միջոցը պահպանելու պարտականությունը

Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում **վարձակալը** պարտավոր է ապահովել վարձակալած տրանսպորտային միջոցի պատշաճ վիճակը: Այդ պարտականությունը ներառում է դրա ընթացիկ և հիմնական վերանորոգումը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 648. Վարձակալի՝ տրանսպորտային միջոցի կառավարման, առևտրային և տեխնիկական շահագործման պարտականությունները

Վարձակալն իր ուժերով իրականացնում է վարձակալած տրանսպորտային միջոցի կառավարումը, ինչպես նաև դրա առևտրային և տեխնիկական շահագործումը:

Հոդված 651. Պատասխանատվությունը տրանսպորտային միջոցով պատճառված վնասի համար

Վարձակալված տրանսպորտային միջոցով, նրա մեխանիզմներով և սարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, սույն օրենսգրքի 60 գլխի կանոններին համապատասխան, պատասխանատվությունը կրում է **վարձակալը**: